

## 1. Փաստաբանի հետ կոնֆիդենցիալ խորհրդատվության և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը

### Ա. Երբ.

- Հարցաքննվողը հարցաքննության ընթացքում փաստաբանի կոնֆիդենցիալ խորհրդատվության և նրանից իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունի:
- Երբ հարցաքննության առկա փաստերով նախատեսված է ազատազրկում, կիրառվում է Գ. կետով սահմանված ընթացակարգը:

### Բ. Փաստաբանի ընտրությունը

- Քաղաքացին իրավունք ունի փաստաբան ընտրել իր հայեցողությամբ:
- Իրավական համակարգով որոշված պայմաններում (հանգամանքներում) քաղաքացին իրավունք ունի օգտվել փաստաբանի ամբողջությամբ կամ մասամբ անվճար աջակցությունից: Քաղաքացին իրավունք ունի խնդրել, որպեսզի իրեն տրամադրվի այն փաստաթուղթը, որում ի մի են բերված այդ պայմանները և դրանից հետո նման օգնության հարցով միջնորդել Փաստաբանների կոլեգիա:

### Գ. Կոնֆիդենցիալ խորհրդատվության անցկացման կարգը

Եթե կալանվածը ստացել է գրավոր ծանուցագիր իր իրավունքների թվարկմամբ, որոնց մասին նշված է 1-4 կետերում և որոնցով ենթադրվում է, որ նա նախապես խորհրդակցել է փաստաբանի հետ մինչ հարցաքննությանը ներկայանալը, ապա.

- կալանվածին այլևս հարցաքննության հետաձգում չի տրվի, քանի որ նրան արդեն ընձեռնվել է փաստաբանի հետ խորհրդակցելու այդ հնարավորությունը:
  - եթե կալանվածը չի դիմում փաստաբանի օգնությանը, ապա

նա տեղեկացվում է մինչ հարցաքննության սկսվելը լռություն պահպանելու իր իրավունքի մասին (տես 3 կետը):

Եթե կալանվածը գրավոր ծանուցագիր չի ստացել, կամ ստացել է ոչ ամբողջական գրավոր ծանուցագիր, ապա.

- կալանվածը կարող է միայն մեկ անգամ դիմել հարցաքննությունը ավելի ուշ ժամկետի հետաձգելու խնդրանքով, որպեսզի փաստաբանի հետ խորհրդակցելու հնարավորություն ունենա:
- Կալանվածը կարող է որոշում ընդունել փաստաբանի հետ խոսել հեռախոսով, ինչից հետո միայն կարող է սկսվել հարցաքննությունը:
- Կալանվածն իրավունք ունի է իր փաստաբանի գալու սպասել հարցաքննության վայրում:

### Դ. Իրավաբանական օգնությունը հարցաքննության ժամանակ

- Փաստաբանը պետք է ապահովի.
- ցուցմունքներ և բացատրություններ տալուց և իր դեմ վկայություններ տալուց հրաժարվելու իր պաշտպանյալի իրավունքները:
  - հարցալից վերաբերմունքը իր պաշտպանյալի հետ առանց նրան ստիպելու կամ նրա հանդեպ անօրինական ճնշում գործադրելու:
  - հարցաքննության ժամանակ պաշտպանյալի տեղեկացվածությունը իր իրավունքների մասին և իրավական նորմերի պահպանումը:

Եթե այս փուլում փաստաբանի մոտ ինչ-որ նկատողություններ են հայտնվում, ապա նա իրավունք ունի դրանք անհապաղ ներառել հարցաքննության արձանագրության մեջ: Նա կարող է տրվող հարցերի վերաբերյալ բացատրություններ պահանջել: Նա կարող է մեկնաբանություններ տալ հետաքննության և հարցաքննության վերաբերյալ:

Ե. Փաստաբանի հետ կոնֆիդենցիալ խորհրդատվությունից հրաժարվելը

Հարցաքննվողը պարտավոր չէ օգտվել փաստաբանի հետ կոնֆիդենցիալ խորհրդատվության իր իրավունքից:

Իր հայեցողությամբ հարցաքննվողը կարող է հրաժարվել իր այդ իրավունքից՝ նախապես լրջորեն խորհելով նման որոշման հետևանքների մասին, եթե.

- նա չափահաս է:
- նա անձամբ ստորագրել և նշել է ամսաթիվը նման իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթի տակ:

## 2. Փաստացի հանգամանքների հակիրճ շարադրանքը

- Հարցաքննվողը իրավունք ունի ծանոթանալ հարցաքննությանն առընչվող փաստացի հանգամանքների հակիրճ շարադրանքի հետ:

## 3. Ցուցմունքներ և բացատրություններ տալուց հրաժարվելու իրավունքը

- Հարցաքննվողը պարտավոր չէ ցուցմունք տալ ինքն իր դեմ հարցաքննության և ոչ մի փուլում:
- Հարցաքննվողի անձը հաստատվելուց հետո նա իրավունք ունի ցուցմունքներ և բացատրություններ տալ, պատասխանել հարցերին կամ լռություն պահպանել:

## 4. Այլ իրավունքները հարցաքննության ժամանակ

Հարցաքննությունից առաջ հարցաքննվողին որոշակի տեղեկություններ են հայտնում: Բացի իրավախախտումների հակիրճ շարադրանքից և հարցաքննվողին լռություն պահպանելու իր իրավունքի մասին տեղեկացնելուց, նրան պետք է հայտնել նաև, որ.

- նա իրավունք ունի պահանջել իրեն տրվող հարցերի և իր պատասխանների բառացի արձանագրում:

- նա իրավունք ունի պահանջել որոշակի հետաքննություն կամ կոնկրետ անձի հարցաքննություն:
- նրա ցուցմունքները կարող են օգտագործվել որպես դատարանի կողմից ընդունվող ապացույցներ:
- նա կալանված չի հանդիսանում և ցանկացած պահի կարող է գնալ: հարցաքննվողն իրավունք ունի հարցաքննության ժամանակ օգտագործել իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը, եթե դրա համար հետաձգում չի պահանջվում: Հարցաքննության ժամանակ կամ դրանից հետո հարցաքննվողն իրավունք ունի պահանջել, որ այդ փաստաթղթերը կցվեն համապատասխան արձանագրությանը կամ փոխանցվեն դատարանի գրասենյակ:

## 5. Հարցաքննության վերջում

Հարցաքննության վերջում ծանոթացման համար հարցաքննվողին տրվում է հարցաքննության արձանագրությունը: Հարցաքննվողը նաև իրավունք ունի խնդրել, որ իր համար կարդան արձանագրությունը:

Հարցաքննվողին հնարավորություն է տրվում իր տված ցուցմունքներում փոփոխություններ և լրացումներ մտցնել:

## 6. Թարգմանչի օգնություն և թարգմանության իրավունք

- Եթե դուք չեք հասկանում կամ չեք տիրապետում լեզվին, կամ եթե ձեզ մոտ առկա են լսողության կամ խոսքի հետ կապված խանգարումներ, ապա հարցազրույցի ժամանակ ձեզ կտրամադրվի երդվյալ թարգմանչի օգնություն:
- Ձեզ կարող է առաջարկվել ցուցմունքները գրի առնել նաև ձեր մայրենի լեզվով:
- Եթե դուք չեք հասկանում դատավարության լեզուն, ապա ունեք իրավունք՝ թարգմանելու ձերբակալման հրամանագիրը, դատարան ներկայանալու ծանուցագիրը և դատարանի որոշումը ձեզ հասկանալի լեզվով: Այս օգնությունը տրվում է անվճար:

**Իրավունքների պարզաբանման այս թերթիկը Դուք կարող եք պահել ձեզ մոտ:**